ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«6» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-41/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 20.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.04.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը «ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգով մրցույթին մասնակցելու նպատակով 06.02.2016թ. ներկայացրել է հայտ:

«ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2016թ. նիստի որոշմամբ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցնող մասնակից, և պահանջվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել

որակավորման չափանիշները հիմնավորող ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը և հրավերի 7.5 կետով սահմանված ժամկետում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ առաջարկված գնի վերաբերյալ: Այնուհետև 22.02.2016թ. թիվ 5 արձանագրության 2-րդ կետի համաձայն, այն է՝ հանձնաժողովն ուսումնասիրեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած որակավորումը հիմնավորող շտկված փաստաթղթերը և գնային առաջարկի վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումները և գնահատման արդյունքում հանձնաժողովն արձանագրեց, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերից՝ մասնագիտական փորձառությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ ներկայացված նախկինում կատարված պայմանագրերում չկա հրավերի 2.3 կետով սահմանված կապի ոլորտի լիցենզիայի ներքո շինարարական աշխատանքների կատարման փաստը հավաստող նախկինում կատարված աշխատանքներ, իսկ 3-րդ կետի ա) և բ) ենթակետերով, այն է՝ ա) «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար, բ) մերժել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ մասնագիտական փորձառությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

Սակայն «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագրում նշել է օրը, ամիսը և տարեթիվը, ինչը հակասում է պահանջագրի լրացման պարտադիր վավերապայմաններին և լրացման կարգի 2-րդ կետին:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, քանի որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից վճարման պահանջագրում խախտում արձանագրելու դեպքում գնահատող հանձնաժողովը պետք է առաջնորդվեր օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և անհապաղ մերժեր «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը: Հետևաբար այս պարագայում ընկերությունը չպետք է ճանաչվեր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից շինարարական աշխատանքների համար «ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով հայտարարված ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 26.04.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-41/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի

ներկայացուցիչը հայտնեց, որ իրենք հետագայում են միայն նկատել, որ Ընկերության հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագրում սխալմամբ նշել են օրը, ամիսը և տարեթիվը, ինչը հակասում է պահանջագրի լրացման պարտադիր վավերապայմաններին և լրացման կարգի 2-րդ կետին:

2. «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.05.2016թ. թիվ 21/14-842 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1 ծածկագրով ««ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 9 հարկանի մասնաշենքի 4-րդ և 5-րդ հարկերի կապիտալ վերանորոգման և 6-րդ, 7-րդ հարկերի սանհանգույցների կապիտալ վերանորոգման աշխատանքներ»-ի կատարման համար հայտարարված գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել տասներկու մասնակիցներ: Հայտերը գնահատվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության և ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1 ծածկագրով հրավերով սահմանված կարգով:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն 24.02.2016թ. ահազանգել է Կենտրոնի թեժ գծին և հայտնել, որ Ընկերությունը մասնակցել է «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգին և գտնում էր, որ խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, որ Ընկերության ներկայացրած հայտը մերժվել է հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ներկայացված ահազանգի վերաբերյալ ՊՈԱԿ-ին ներկայացրած փաստաթղթերը, 16.03.2016թ. թիվ 01/04.1/979-16 գրությամբ հայտնել է, որ գնումների բողոքարկման խորհրդում Կենտրոնի թեժ գծին 24.02.2016թ. ներկայացրած ահազանգի վերաբերյալ բողոքարկման գործընթաց նախաձեռնելու հիմքեր առկա չեն:

Գնահատող հանձնաժողովը ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստում «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը գնահատել է բավարար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հրավերի 7.2-րդ

կետով սահմանված պահանջների համաձայն: Մասնավորապես, Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման 1.1 կետի պահանջների համաձայն՝ տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը պետք է լրացված և հաստատված լինի Ընկերության կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների», ինչին համապատասխան ներկայացված էր վճարման պահանջագիրը:

Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և գնահատող հանձնաժողովի 10.02.2016թ. որոշմամբ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում՝

ա/ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար ներկայացված պայմանագիրը չի համապատասխանում հրավերի 2.3 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին՝ ներկայացված պայմանագիրը կատարվել է բնակելի հասարակական և արտադրական ոլորտի լիցենզիայի ներքո, իսկ հրավերով սահմանված նմանատիպ՝ էներգետիկ, հիդրոտեխնիկական, կապի ոլորտի լիցենզիաների ներքո կատարված շինարարական աշխատանքների պայմանագիր և տվյալ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը չեն ներկայացվել:

բ/ «ՈՒԱԿ-ԲԸԱՇՁԲ-15/11» պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունները թերի են կազմված, հանձնման-ընդունման արձանագրություններից՝ N3, N4, N5 արձանագրությունների կազմման ժամկետներ չկան նշված, որը հնարավորություն չի տալիս գնահատելու պայմանագրի սահմանված ժամկետում կատարված լինելու փաստը:

գ/ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատելու համար հայտով ներկայացված չէ հրավերով սահմանված կապավոր ինժեների տվյալները, հաստատած

գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին, ինչպես նաև անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Հրավերով սահմանված ժամկետում հնարավորություն է տրվել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ին շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը լրացուցիչ ներկայացրել է նախկինում կատարված նմանատիպ՝ հիդրոտեխնիկական և էներգետիկ ոլորտների լիցենզիաների ներքո կատարված աշխատանքների պայմանագրերը, հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները, կապի ոլորտի լիցենզիայի ճշտված տարբերակը:

Մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի գնահատման համար հրավիրված նիստում գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերից՝ մասնագիտական փորձառությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ ներկայացված նախկինում կատարված պայմանագրերում չկա հրավերի 2.3 կետով սահմանված կապի ոլորտի լիցենզիայի ներքո շինարարական աշխատանքների կատարման փաստը հավաստող նախկինում կատարված աշխատանքներ:

Ընկերությունը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից է ճանաչվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին՝ (գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում) և սկզբունքներին՝ (1.գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում. 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում) համապատասխան՝ ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1 ծածկագրով հրավերով սահմանված կարգով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով և Ընկերություն գտնում է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և հրավերով սահմանված պահանջների համաձայն և բողոքի առարկան անհիմն է:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 26.04.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-41/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «ՀՀ ոստիկանության

կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները պարզաբանեցին, որ իրենք չեն նկատել, որ Ընկերության հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնության վճարման պահանջագրում առկա է թերություն և գտնում են, որ նշված տեխնիկական վրիպակը հիմք չէ ամբողջ ընթացակարգն ապօրինի հայտարարելու համար:

3. ԳԲԽ-41/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-41/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 9 հարկանի մասնաշենքի 4-րդ և 5-րդ հարկերի կապիտալ վերանորոգման և 6-րդ, 7-րդ հարկերի սանհանգույցների կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման համար կազմակերպվել է «ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն:

2. «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 9 հարկանի մասնաշենքի 4-րդ և 5-րդ հարկերի կապիտալ վերանորոգման և 6-րդ, 7-րդ հարկերի սանհանգույցների կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման համար կազմակերպված «ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերին կից ներկայացված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ի համաձայն՝ ներկայացման ամսաթիվը լրացվում է պարտադիր, լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

3. «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 06.02.2016թ. ներկայացրած հայտի թիվ 9 հավելվածով ներկայացված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագրում լրացված է ներկայացման ամսաթիվ՝ ***«06 փետրվարի 2016թ.»***:

4. «ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ Գնահատող հանձնաժողով) 22.02.2016թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց 1-ին տեղ

զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած որակավորումը հիմնավորող շտկված փաստաթղթերը և գնային առաջարկի վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումները և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովն արձանագրեց, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերից՝ մասնագիտական փորձառությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ ներկայացված նախկինում կատարված պայմանագրերում չկա հրավերի 2.3 կետով սահմանված կապի ոլորտի լիցենզիայի ներքո շինարարական աշխատանքների կատարման փաստը հավաստող նախկինում կատարված աշխատանքներ:»

5. «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն 24.02.2016թ. ժամը 15:06-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ Գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

6. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 16.03.2016թ. թիվ 01/04.1/979-16 գրությամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ Գնահատող հանձնաժողովը, մերժելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը՝ մասնագիտական փորձառությունը հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմքով, չի խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել 06.02.2016թ., իսկ կապի ոլորտում շինարարության իրականացման լիցենզիան ստացել է՝ 05.02.2016թ., ինչը նշանակում է, որ Ընկերությունը չէր կարող նախկինում կատարել կապի ոլորտի լիցենզիայի ներքո շինարարական աշխատանքներ:

<u>4. ԳԲԽ-41/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 20.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 9 հարկանի մասնաշենքի 4-րդ և 5-րդ հարկերի կապիտալ վերանորոգման և 6-րդ, 7-րդ հարկերի սանհանգույցների կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման համար կազմակերպված «ՀՀ ՈԿ-ԲԸԱՇՁԲ-

16/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 20.04.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Հրավերով ներկայացված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ի համաձայն՝ ներկայացման ամսաթիվը լրացվում է պարտադիր, լրացվում է շահառուի կողմից՝ **<u>վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:</u>**

Գտնում ենք, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մասը հանդիսացող վճարման պահանջագիրը կազմված չի եղել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, մասնավորապես լրացված է եղել ներկայացման ամսաթիվը, որը պետք է լրացվեր շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

Գնահատող հանձնաժողովը, չարձանագրելով նշված անհամապատասխանությունը 10.02.2016թ. N 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել Ընկերությանը և առաջարկել 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված՝ 1-ին տեղը զբաղեցնող մասնակցից պահանջվող փաստաթղթերը, իսկ 02.02.2016թ. N 5 արձանագրության 3-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ որոշել է մերժել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գծով Հրավերին չհամապատասխանելու հիմքով:

Այսպիսով, Գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պետք է մերժեր Ընկերության կողմից ներկայացված հայտը, սակայն չարձանագրելով առկա անհամապատասխանությունը և Ընկերության

հայտը, այդ փուլում չմերժելով, վերջինիս ճանաչել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Հետագայում «մասնագիտական փորձառություն» չափանիշին չբավարարելու հիմքով մերժել է վերջինիս կողմից ներկայացված հայտը, այսինքն՝ Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը հաղթող չի ճանաչվել, հետևաբար նաև Պատվիրատուի կողմից պայմանագիր չի կնքվել Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ ներկայացրած մասնակցի հետ:

Կենտրոնը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության հայտը՝ հայտի ապահովման մասը հանդիսացող վճարման պահանջագիրը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, նշված փուլում ենթակա էր մերժման, սակայն նշված խախտումը հիմք չի կարող հանդիսանալ ամբողջ ընթացակարգն ապօրինի հայտարարելու համար՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նշված խախտումը որևէ կերպ չի անդրադարձել Ընթացակարգի առկա ընթացքի վրա և Ընկերության հայտը այնուամենայնիվ ենթակա էր մերժման (հիմք՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 16.03.2016թ. թիվ 01/04.1/979-16 գրություն):

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նման պայմաններում Ընթացակարգն ապօրինի հայտարարելու պահանջը ենթակա չէ բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 20.04.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-41/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան